ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՍՄԱ-ԳՀԱՇՁԲ-2025/04» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք.Կապան 28 հուլիս 2025թ
ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Բալյան Վարեն - ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական

հանձնաժողովի անդամներ՝

Հովհաննիսյան Մասիս - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ

Մարտիրոսյան Արմեն - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Առուստամյան Ռոբերտ - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Մովսիսյան Նելլի - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

հանձնաժողովի քարտուղար՝ Գրիգորյան Սահականուշ (գնումների համակարգող)

1. Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հայտարարության և հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 16:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

2. ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀՍՄԱ-ԳՀԱՇՁԲ-2025/04» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Հ/Հ	Մասնակցի անվանում	ՀՎՀՀ	Հասցե	Էլ. փոստի հասցե
1	Սիսիանի «Նոր Բակ»(նորոգշին) ԲԲԸ	09806674	Սյունիքի մարզ, Սիսիան, Շիրակի 13	snorogshin@mail.ru

3. Մասնակիցի կողմից ներկայացված գնային առաջարկը.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Մասնակցի գնային առաջարկ			Նախահաշվային գին
		Արժեք	ԱԱՀ	Ընդամենը	
Չափաբաժին 1՝ Սիսիանի մարզադպրոցի տարածքի բարեկարգման և արտաքին հարդարման աշխատանքներ					
1	Սիսիանի «Նոր Բակ»(նորոգշին) ԲԲԸ	29100000	5820000	34920000	35658320

4. Մասնակիցի կողմից ներկայացված հայտում առկա են բոլոր փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացի

- առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

5. Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

6. Հրավերի վերաբերյալ հարցեր և պարզաբանումներ չեն եղել:

7. Հրավերում կատարվել է փոփոխություն՝ շտկվել են պահանջվող լիցենզիաների ցանկը: Կատարված փոփոխության մասին հայտարարությունը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

8. Մասնակցին հայտնաբերված անհամապատասխանությունների շտկման հնարավորություն տալու նպատակով, **գնահատող հանձնաժողովը որոշեց** հայտերի բացման և գնահատման նիստը կասեցնել 1 (մեկ) աշխատանքային օրով և այդ մասին ծանուցել մասնակցին՝ շտկելու անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

Հայտերի բացման և գնահատման նիստը շարունակվել է հուլիսի 29-ին ժամը 17:00-ին ք.Կապան, Գ.Նժդեհի 1 հասցեում , որին մասնակցում էին՝

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝	Բալյան Կարեն
հանձնաժողովի անդամներ՝	Հովհաննիսյան Մասիս
	Մարտիրոսյան Արմեն
	Առուստամյան Ռոբերտ
	Մովսիսյան Նելլի
հանձնաժողովի քարտուղար՝	Գրիգորյան Սահականուշ

9. Սիսիանի «Նոր Բակ» (Նորոգշին) ԲԲԸ-ն սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին է ներկայացրել պահանջված փաստաթղթերը:

10. Հայտերը գնահատվել են «ՀՀԼՄԱ-ԳՀԱՊՁԲ-2025/04» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Մասնակցի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին և գնահատվել է «**Բավարար**»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

11. Գնահատող հանձնաժողովը որոշեց, հիմք ընդունելով գնահատման արդյուքները ընտրված մասնակից ճանաչել Սիսիանի «Նոր Բակ»(նորոգշին) ԲԲԸ-ին :

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

12. Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և անգործության ժամկետ չսահմանել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Կարեն Բալյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Մասիս Հովհաննիսյան

_____ Արմեն Մարտիրոսյան

_____ Ռոբերտ Առուստամյան

_____ Նելլի Մովսիսյան

հանձնաժողովի քարտուղար՝ _____ Սահականուշ Գրիգորյան